«Ոզնի» ֆինանսական գրագիտության մրցաշար
ԿԱՐԳ

«Ոզնի» ֆինանսական գրագիտության մրցաշարը մեկն է «Քոնթեստս Լաբ» կրթական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպիչ) այն բազմաթիվ ծրագրերից, որոնք ուղղված են հանրակրթության ոլորտում տաղանդավոր երեխաների բացահայտմանը:

«Ոզնի» ֆինանսական գրագիտության մրցաշարը (այսուհետ՝ Մրցաշար) թիմային մրցույթ է, որում 10-12-րդ դասարանների աշակերտները դրսևորում են ֆինանսական, մաթեմատիկական խնդիրներ լուծելու, լուծումները համոզիչ ձևով ներկայացնելու իրենց ունակություններն ու հմտությունները:

Մրցաշարի հիմքում հանրակրթական տարբեր առարկաների դասագրքերում ներառված ֆինանսական գրագիտության բովանդակությունն է:

ՄՐՑԱՇԱՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՓՈՒԼԵՐԸ

Մրցաշարի նպատակներն են՝

- Նպաստել ֆինանսապես գրագետ սերունդների դաստիարակությանը:
- Բարձրացնել ֆինանսական կրթության ու գրագիտության նկատմամբ աշակերտների, ուսուցիչների, ծնողների և դպրոցների հետաքրքրվածությունը:
- Բարձրացնել ֆինանսական կրթության բաղադրիչի ինտեգրման և դասավանդման գործում ուսուցիչների մոտիվացիան:
- Բարձրացնել աշակերտների ֆինանսական գիտելիքի և հմտությունների յուրացման մակարդակը:
- Խթանել ֆինանսական կրթության բաղադրիչի ուսուցման որակի բարձրացմանը:
- Խթանել աշակերտների թիմային աշխատանքի և հաղորդակցական հմտությունների զարգացումը:
- Խթանել աշակերտների ստեղծագործական և վերլուծական հմտությունների զարգացումը և ֆինանսական համատեքստում դրանց պրակտիկ կիրառումը:
- Խթանել անակնկալ իրավիճակում ֆինանսական տեղեկությունների աղբյուրներ գտնելու, դրանցից օգտվելու և ծանրակշիռ ու իրազեկված որոշումներ կայացնելու աշակերտների կարողության զարգացումը:
- Բարձրացնել նմանատիպ միջազգային մրցույթների նկատմամբ դպրոցների, աշակերտների, ուսուցիչների և ծնողների հետաքրքրվածությունը և ընդլայնել դրանցում նրանց մասնակցության հնարավորությունը:
- Գնահատել աշակերտների առկա ֆինանսական գիտելիքն ու հմտությունները:

- Խրախուսել և շահագրգռել տարատեսակ ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպություններին, ներառյալ՝ բանկերին, աջակցելու և ակտիվ մասնակցելու դպրոցականների ֆինանսական կրթմանն ուղղված ծրագրերին, հատկապես, Մրցաշարին, «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրին, «Փողի միջազգային շաբաթ» և այլ նախաձեռնությունների շրջանակում կազմակերպվող միջոցառումներին և բարձրացնել դրանցում մասնակցության աստիճանը:

ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԹԻՄԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Մրցաշարի մասնակից կարող են լինել 10-12-րդ դասարանների աշակերտները և քոլեջների առաջին և երկրորդ կուրսերի ուսանողները:
Մրցաշարի եզրափակիչ փուլում յուրաքանչյուր թիմ պետք է ունենա իր մարզիչը (աշակերտների մաթեմատիկայի կամ այլ առարկայի ուսուցիչ), որը կկարողանա խորհուրդներով ուղղորդել թիմին նախապատրաստվելիս: Ամեն թիմ կարող է ունենալ միայն մեկ մարզիչ:
Ձևավորումից հետո թիմի անդամները պետք է ընտրեն թիմի ավագին և թիմի անունը՝ ուղարկելով այն Կազմակերպչի էլ.հասցեին՝ vozni@contests.am:
Թիմերի կազմավորման համար նախաձեռնող կարող են լինել ինչպես աշակերտները, այնպես էլ ուսուցիչները, որոնք կցանկանան հանձն առնել թիմի նախապատրաստումը որպես մարզիչ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ

Մասնակցության վճարը՝

- կազմում է 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ յուրաքանչյուր մասնակցի համար (վճարներից գոյացող գումարներն օգտագործվում են բացառապես կազմակերպչական աշխատանքների համար)
- կատարվում է մինչև կազմակերպչի կողմից կայքում նշված վերջնաժամկետը
- կատարվում է թիմի կողմից (բոլոր մասնակիցներով հանդերձ), ինչով և հաստատվում է նրանց մասնակցությունը Մրցաշարին (Կազմակերպչի *նշած վերջնաժամկետից հետո մասնակցությունից հրաժարվելու դեպքում մասնակցության վճարը չի վերադարձվում).*
- կատարվում է բանկային փոխանցման միջոցով: Մասնակիցները վճարը փոխանցում են **«Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ-ի հետևյալ հաշվեհամարին՝** «Էվոկաբանկ» ՓԲԸ 1660030219949600: Վճարումն անելիս պետք է նշել **վճարման նպատակը՝** *մասնակցի անուն-ազգանուն, թիմի անուն, դասարան և դպրոց և «Ոզնի» մրցույթի մասնակցության վճար:*

ՄՐՑԱՇԱՐԻ ԹԵՍՏԱՅԻՆ (ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ) ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Մրցաշարն անցկացվում է երկու փուլով:

- **Թեստային (վարկանիշավորման) փուլ:** Վարկանիշավորման կամ թեստային փուլը լինելու է 2024 թվականի ապրիլի 27-ին: Այս փուլում աշակերտները մասնակցում են ֆինանսական գրագիտության հարցախաղին, որի ընթացքում սահմանված ժամանակահատվածում առցանց հարթակում պատասխանում են հարցաշարի հարցերին: Առցանց հարցաշարը 30 հարցից կազմված և 75 րոպե տևողությամբ անհատական թեստ է: Թիմի գնահատականը համարվում է թիմի բոլոր անդամների գնահատականի գումարը:

- **Կիսաեզրափակիչ (լրացուցիչ) փուլ:** Ըստ թեստային փուլի արդյունքների՝ հավասար միավորների դեպքում հնարավոր է լրացուցիչ փուլ թիմերի կամ առանձին մասնակիցների գնահատման համար: Լրացուցիչ փուլի անցկացման պարագայում թեստը կազմված կլինի 10 ընտրովի պատասխան պահանջող հարցից և հարցազրույցից: Թեստը լրացնելու համար կտրամադրվի 30 րոպե ժամանակ:

- **Եզրափակիչ փուլ:** Թեստային կամ վարկանիշավորման փուլում հաղթող ճանաչված մասնակիցներից ձևավորված թիմերը, առավելագույնը 9-10 թիմ մասնակցում են եզրափակիչ փուլին, որի արդյունքում որոշվում է Մրցաշարի հաղթողը: Աշակերտներն իրենց պատրաստած առաջարկները ներկայացնում են 9 րոպե տևողությամբ Power Point կամ այլ գործիքով պատրաստված սահիկաշարի միջոցով և 3 րոպեի ընթացքում պետք է պատասխանեն ժյուրիի անդամների հնարավոր հարցերին:

ՄՐՑԱՇԱՐԻ ԹԵՍՏԱՅԻՆ(ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ) ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Թեստային կամ վարկանիշավորման փուլում թեստային 30 հարցերից առաջին 10-ը կլինեն երեք միավորանոց, երկրորդ 10 հարցը՝ 4-միավորանոց և վերջին 10 հարցը՝ 5 միավորանոց: Թիմային գնահատականը ձևավորվելու է մասնակից թիմի բոլոր 5 անդամների գնահատականների հանրագումարով: Միավորների առավելագույն շեմը 600 է:

Եզրափակիչ փուլում կգործի գնահատման հետևյալ համակարգը՝

Ընտանիքի ֆինանսական վիճակի բարելավման ուղղությամբ երկժամյա թիմային աշխատանքի և այդ աշխատանքի սահիկաշարով ներկայացման հիման վրա ժյուրին կունենա թիմի հետ հարցուպատասխանի հնարավորություն, ինչից հետո ժյուրիի 5 անդամները կգնահատեն թիմերի աշխատանքն՝ ըստ հետևյալ չափանիշների՝

- ֆինանսական բովանդակությունիմացություն, և տարբեր ռեսուրսների մասին իրազեկվածություն, դրանք գտնելու և դրանցից օգտվելու հմտություններ, վերլուծական միտք՝ առավելագույնը 40 միավոր,
- Ստեղծագործ մտածողություն՝ հնարամիտ և նորարար մոտեցումներ, լավագույն լուծումների առաջարկություն՝ առավելագույնը 30 միավոր
- Թիմային աշխատանք՝ թիմում բոլորի մասնակցություն, հաղորդակցական հմտություններ, պրեզենտացիայի դիզայն և ընկալելիության մակարդակ՝ առավելագույնը 30 միավոր:

ՄՐՑԱՇԱՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԻ ԺՅՈՒՐԻԻ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ՎԱՐՈՂ

Եզրափակիչ փուլի սահուն կազմակերպման համար մրցաշարն ունենալու է Վարող, որը հետևելով և հայտարարություններով ապահովելու է մրցույթի ողջ ընթացքը:

Մրցաշարի մասնակիցների գնահատումն ու հաղթողների որոշումն ապահովելու է ժյուրին, որի անդամները ընտրվելու են ոլորտի մասնագետներից և առաջատար կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Մրցաշարի ընթացքում Կազմակերպիչն իր հերթին նշանակելու է մեկ-երկու անդամից բաղկացած հաշվիչ հանձնաժողով, որը պատասխանատու է լինելու գնահատականների հաշվարկի և հանրագումարի դուրսբերման համար:

Եզրափակիչ փուլի ավարտին ժյուրիի անդամները հաշվիչ հանձնաժողովի հետ միասին կառանձնանան ամփոփիչ նիստի, որտեղ հաշվիչ հանձնաժողովն ամփոփ կներկայացնի արդյունքները և ընդհանուր հաստատումից ու հաշվարկային թերթիկների ստորագրումից հետո մրցանակաբաշխության ընթացքում կհայտարարվի հաղթող թիմին և մյուս անվանակարգերի արժանացածներին:

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Մրցաշարի եզրափակիչ փուլում թիմերի համար կգործեն հետևյալ մրցանակային անվանակարգերը՝ «Առաջին տեղ», «Երկրորդ տեղ», «Երրորդ տեղ»: Մրցանակաբաշխության ընթացքում եզրափակիչում մրցակցող թիմերի ուսուցիչների/մարզիչների և գործընկեր կազմակերպությունների համար համապատասխանաբար կսահմանվեն «Լավագույն մարզիչ» և «Մրցաշարի լավագույն գործընկեր/աջակից» անվանակարգերը:

Մրցաշարում առաջին, երկրորդ և երրորդ տեղը գրաված թիմերի յուրաքանչյուր անդամ և թիմերի մարզիչները կստանան խրախուսական նվերներ՝ ֆինանսական գրագիտության թեմայովև ոչ միայն:

Եզրափակիչ հանրապետական փուլի մասնակից բոլոր թիմերն ու նրանց մարզիչները կստանան մրցանակների հատուկ փաթեթներ՝ ֆինանսական գրագիտության և խնայողությունների թեմաներով:

Մրցաշարի եզրափակիչ փուլում հնարավոր է հանդիսատեսի ներգրավվում՝ ըստ Կազմակերպչի հետ՝ յուրաքանչյուր թիմից նախատեսվող հյուրերի քանակի շուրջ նախնական համաձայնության: